ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

# ԹԵ ՊԱՏԿԵՐՆԵՐՆ ԱՅԴ ՃԱՆԱՉԵՍ, ԻՆՔԴ ՔԵԶ ՄԻՇՏ ԿՓՐԿԵՍ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԵԾԵՐԻՆ ԵՎ ՓՈՔՐԵՐԻՆ




Սիրուշ Հովհաննիսյան

Humanitarian Aid and Civil Protection

ՀՏԴ 373.3
ԳՄԴ 74.2
Հ 854

Հեղինակ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թե պատկերներն այդ ճանաչես, ինքդ քեզ միշտ կփրկես:
Հ 854 Խորհուրդներ մեծերին և փոքրերին / Ս. Հովհաննիսյան
- Երևան: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ:
2013. – 20 էջ:

**Գրքույկ ծնողների և կրտսեր տարիքի դպրոցականների համար**

Սույն գրքույկը նախատեսված է ծնողների և կրտսեր տարիքի դպրոցականների համար: Գրքույկում ներառված են մի շարք նշաններ, որոնք դեռ վաղ տարիքից ծնողների օգնությամբ ճանաչված լինելով երեխաների կողմից, կարող են զգուշացնել, արգելել, հուշել, ցուցանշել, ինչպես նաև օգնել նրանց տարաբնույթ վտանգների ժամանակ:

Գրքույկը երաշխավորված է գործածության
ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

ISBN 978-99941-2-906-5

ՀՏԴ 373.3
ԳՄԴ 74.2

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), 2016

# ԹԵ ՊԱՏԿԵՐՆԵՐՆ ԱՅԴ ՃԱՆԱՉԵՍ, ԻՆՔԴ ՔԵԶ ՄԻՇՏ ԿՓՐԿԵՍ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԵԾԵՐԻՆ ԵՎ ՓՈՔՐԵՐԻՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Արգելող նշաններ 6

Հրդեհային անվտանգության նշաններ 10

Հրդեհային անվտանգության նշաններ 12

Տարհանման նշաններ 15

Եթե չկան նշաններ 19



Մոլորակի վրա այս զարմանազան
Ապրում են ազգեր բազմազան:
Ամեն ազգ ունի իր լեզուն,
Բայց մի գաղտնիք բացեմ թաքուն:
Մի լեզու կա միջազգային,
Գիտե՞ք, առանց խոսքի է այն,
Նշանների մի մեծ խումբ՝

Իր գույնով և պատկերով,
Ուղերձներ է բոլորին:
Նշաններն այդ կարող են
Զգուշացնել կամ արգելել,
Անգամ կարող են հուշել,
Ցուցանշել և օգնել,
Փորձանքից մեզ հետ պահել:

# ԱՐԳԵԼՈՂ ՆՇԱՆՆԵՐ



Այս նշանը ճանաչել շատ հեշտ է
Կարմիր շրջան և կարմիր գիծ՝ արգելք է:





«Մուտք չկա»

«Մուտք չկա»:
Ոզում ես, թե ոչ,
Մեկ է դու այն կողմ
Չպիտի գնաս:
Անգամ կարդալ թե չգիտես,
Նկարից այն կհասկանաս:

Եթե ունես դու լապտերիկ,
Մի՛ վարանիր, օգտագործիր:
Յապա պահի՛ր լուցկին հեռու,
Չէ որ հանկարծ թե այն վառես,
Շուրջդ կայրվի անմիջապես:



«Չի թույլատրվում օգտվել բաց կրակից կամ ծխել»





*«Անջատել էլեկտրասնուցումը»*

Մինչ հրդեհը մարելը,
Յոսանքազրկի՛ր տարածքը:

Վերելակը շատ պետքական,
Միշտ չէ մեզ օգնական:



*«Չի թույլատրվում վերելակն օգտագործել մարդկանց բարձրանալու կամ իջնելու համար»*



*«Արգելվում է ջրով հանգցնել»*

Գիտենք բոլորս այն,
Որ հաշտ չեն ջուրն ու կրակը:
Բայց միշտ չէ, որ դա այդպես է:



*«Չի թույլատրվում արգելափակել ելքերը»*

Դու ելքերն ազատ պահի՛ր,
Տարբեր իրեր մի՛ ամբարիր:
Ազատ ելքը, դու միշտ հիշի՛ր,
Քո փրկության երաշխիքն է:

# ԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՆՇԱՆՆԵՐ



Նշանն այս դեղին, տեսքով եռանկյան,
Խորհուրդ ունի քեզ՝ թեպետև անձայն.
Վտանգն իրական մի արհամարհիր,
Գործիր շատ զգույշ, եղիր ուշադիր:



Պայթյուն տեղի կունենա
Եվ ցաքուցրիվ կլինի ամեն ինչ,
Թե կրակի հետ զգույշ չվարվես,
Եվ չիմանաս նշանն այս:

*«Պայթյունավտանգ է»*

Այս նշանը մեզ հուշում է՝
Ուշադրություն, վտանգ կա:
Կրակի հետ դուք երբեք,
Մի՛ խաղացեք հենց այստեղ:



*«Ուշադրություն. Յնարավոր է վտանգ կա»*



Այս մեկն էլ մեզ հուշում է,
Որ տեղն այս հրդեհավտանգ է:
Կրակն այս տարածքից
Դուք հեռացրե՛ք:

*«Յրդեհավտանգ է»*

# ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Կարմիր ուղղանկյուն,
Սպիտակ պատկերներ:
Այնտեղ, որտեղ այն կտեսնես,
Վստահ եղիր
Մոտակայքում կան միջոցներ,
Որոնք կօգնեն քեզ պաշտպանվել հրդեհից:
Նշաններն էլ շատ չեն այնքան,
Բայց դե պետք է չմոռանալ:



Հրդեհի դեպքում հեռախոսն այս
Անհրաժեշտ է շատ:
Նշանն այս քեզ կհուշի,
Թե որտեղ է գտնվում այն:

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ

**911** – միասնական հեռախոսահամար

**101** – հրշեջ-փրկարար ծառայություն

**102** – ոստիկանություն

**103** – շտապ օգնություն

**104** – գազի սպասարկման ծառայություն

Հրդեհը մարելու համար
Հրդեհային ծորակն է հարմար:
Թե ճանաչես նշանն այս
Կրակին դու կհաղթես:



*«Հրդեհային ծորակ»:*



Օգնականին այս շուտ հասի՛ր,
Եվ հրդեհը արագ մարի՛ր:

Հարկ է, որ հիշեն բոլորը,
Այս նշանը ցույց կտա տեղը,
Թե որտեղ են պահվում իրերը,
Որոնցով կարող են մարել հրդեհը:





«Հրդեհային ավտոմատ համակարգի (ազդանշանային) գործարկման կոճակ»

Հապա սեղմի՛ր կոճակն այս,
Լսեցի՛ր դու ազդանշան:

## ՏԱՐՀԱՆՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ



Կանաչ ուղղանկյուն, սպիտակ պատկերներ:
Վտանգավոր գոտին արագ լքելու,
Ճանապարհն է փրկության:



«Տարհանման ուղղությունը
դեպի տարհանման ելքեր
(ձախ կողմից դեպի վեր)»



«Տարհանման ուղղությունը
դեպի
տարհանման ելքեր «աջ
կողմից դեպի ներքև)»





Այս նշանը ցույց կտա քեզ
Թե դուռն ինչպես դու բացես.
«Դեպի դուրս» կամ «դեպի քեզ»,
Էլ ժամանակ չկորցնենս:




Երբ ծուխն ամենուր է,
Այս նշանը դու գտիր:
Վստահի եղիր, որ այն քեզ
Ցույց կտա ելքը փրկության:





Այս նշանին թե հանդիպես,
Շատ ուշադիր պետք է լինես,
Քանզի ուղին քեզ համար չէ,
Օգնիր նրան ում որ հարկն է
Որ այս ուղով հանգիստ անցնի:





Թե շարժվում ես դու սայլակով,
Հեռվից հեռու այս նշանը կնկատես:
Ուղին քոնն է, անհոգ եղիր:

Կարող է պատահել հանկարծ
Հրդեհը փակի հիմնական ելքը:
Բայց դեպքերի համար այդ,
«Պահուստային ելքեր» կան:






*«Հավաքակետ»*

Այս նշանը թե տեսնես,
Դու պետք է հիշես.
Լինի հրդեհ, թե այլ աղետ,
Դու հասնում ես «Հավաքակետ»:

# ԵԹԵ ՉԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Իսկ թե չկան նշաններ,
Ամեն դեպքում մի խորհուրդ.
Չգո՛ն եղիր ամենուր:

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՍԻՐՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԹԵ ՊԱՏԿԵՐՆԵՐՆ ԱՅԴ ՃԱՆԱՉԵՍ, ԻՆՔԴ ՔԵԶ ՄԻՇՏ ԿՓՐԿԵՍ

## ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԵԾԵՐԻՆ ԵՎ ՓՈՔՐԵՐԻՆ

**ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐ՝** ԹԵՐԵԶԱ ԴԻԼԲԱՐՅԱՆ, ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ
**ԽՄԲԱԳԻՐՆԵՐ՝** ՀԱՄԼԵՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, ԱՐԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ, ՏԻԳՐԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ
**ՁԵՎԱՎՈՐՈՂՆԵՐ՝** ՎԱՀԱԳՆ ՍԱՐԳՍՅԱՆ, ՎԱՀԱՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

SIRUSH HOVHANNISYAN

# IF YOU KNOW THESE SIGNS, YOU WILL ALWAYS SAVE YOURSELF!

## ADVICE FOR ADULTS AND CHILDREN

**ADVISORS:** TEREZA DILBARYAN, HEGHINE KHACHATRYAN
**EDITORS:** HAMLET MATEVOSYAN, ARA BARSEGHYAN, TIGRAN TOVMASYAN
**DESIGNERS:** VAHAGN SARGSYAN, VAHAN ALAVERDYAN

Humanitarian Aid
and Civil Protection

Սույն ձեռնարկը մշակվել և տպագրվել է Եվրամիության կողմից ֆինանսավորված և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից իրականացված «Աջակցություն Հարավային Կովկասի խոցելի համայնքներում և հաստատություններում աղետների ռիսկի նվազեցմանը» ծրագրի շրջանակներում: Ձեռնարկում արտահայտված կարծիքները հեղինակային են և որևէ ձևով չեն արտահայտում Եվրամիության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տեսակետները:

This publication has been produced within the framework of "Support Disaster Risk Reduction amongst Vulnerable Communities and Institutions in Southern Caucasus" project, funded by the European Union and implemented by the United Nations Children's Fund (UNICEF). The contents of this publication are the sole responsibility of the authors and can in no way be taken to reflect the views of the European Union and UNICEF.

© ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), 2016